ՀՏԴ 94 (479.25)

Պատմություն

Տարոն ՀԱԿՈԲՅԱՆ
ԱրՊՀ պատմության և քաղաքագիտության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.

Սույն գիտական ուսումնասիրությունը կատարվել է <<Գալուստ Գյուլբենկյան>> հիմնարկության կողմից իրականացվող <<Short Term Research Grant for the Study of NagornoKarabakh II>> ծրագրի շրջանակներում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱԽ) ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ (1991-1992ԹԹ.)

Թվում է, թե Հայաստանում և Արցախում ընդհանուր շարժումը ղեկավարվում էր մեկ կենտրոնի կողմից, սակայն, վերլուծելով պատմանական դեպքերը և քաղաքական իրադարձությունների հաջորդականությունը՝ գալիս ենք այն համոզման, որ, որքան էլ պարադոքս է, այն ժամանակվա Արցախում և Հայաստանում շարժման ղեկավարման հիմքում կազմած էին հակոտնյա երկու քաղաքական ուժեր: Այդ քաղաքական ուժերի բախումները Արցախում ավելի արտացոլվեցին ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի ընտրությունների և պետական ինստիտուտների ձևավորման ընթացքում:

ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի ընտրություններում հաղթանակ տանելով՝ ՀՅԴ-ն որոշում ընդունեց երկրում ներքաղաքական կայունությունը պահպանելու, ինչպես նաև ՀՀ իշխանությունների հետ կանոնավոր հարաբերություններ ստեղծելու նպատակով մի շարք կարևոր իշխանական պաշտոններ հանձնել հակառակ քաղաքական թևին:

Սակայն պաշտոնական Երևանը ԼՂՀ-ի համար այդ դժվարին պայմաններում բացահայտ քաղաքական առճակատման գնաց Ստեփանակերտի հետ: Դրա արտահայտությունը դարձան ԼՂՀ իշխանությունների նկատմամբ ՀՀ ղեկավարության հետագա վերաբերմունքն ու ձեռնարկած քայլերը:

Բանալի բառեր՝ *Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետություն, Հայաստանի Հանրապետություն, Գերագույն խորհուրդ, պաշտպանության պետական կոմիտե, ինքնապաշտպանության ուժեր, պետական շինարարություն, ԼՂՀ պետական դրոշ, Շահումյանի շրջան:*

Т. Акопян

Данная научная работа проводится в рамках программы Фонда Галуста Гюльбенкяна «Краткосрочные научные гранты для изучения Нагорного Карабаха II»

ВЗАИМООТНОШЕНИЯ МЕЖДУ РЕСПУБЛИКОЙ АРМЕНИЯ И НАГОРНО-КАРАБАХСКОЙ РЕСПУБЛИКОЙ (АРЦАХ) И ИХ ВЛИЯНИЕ НА ХОД ГОСУДАРСТВЕННОГО СТРОИТЕЛЬСТВА В АРЦАХЕ (1991-1992 ГГ.)

Создается впечатление, что общим движением в Армении и Арцахе руководил один центр, но анализируя исторические события и последовательность политических событий, мы убеждаемся, что, как это ни парадоксально, движением в Арцахе и Армении в то время руководили две крайне противоположные политические силы. Столкновения этих политических сил в большей степени отразились в Арцахе во время выборов Верховного Совета НКР первого созыва и формировании государственных структур.

Победив на выборах в Верховный Совет НКР первого созыва, АРФД приняла решение о передаче ряда важных государственных постов противоположному политическому крылу в целях сохранения внутриполитической стабильности в стране, а также установления стабильных отношений с властями РА.

Однако, в тех непростых для НКР условиях официальный Ереван пошел на открытое политическое противостояние со Степанакертом, ярким выражением которого стало последующее отношение руководства РА к властям НКР и предпринятые шаги.

Ключевые слова: *Нагорно-Карабахская Республика (Арцах), Республика Армения, Верховный Совет, Государственный комитет обороны, Силы самообороны, Государственное*

строительство, Государственный флаг НКР, Шаумяновский район.

T. Hakobyan

This research was conducted in the framework of the «Short Term Reasearch Grant for the Study of Nagorno Karabakh II» program implemented by the Galouste Gulbenkian Foundation

RELATIONS BETWEEN THE REPUBLIC OF ARMENIA AND THE NAGORNO-KARABAKH REPUBLIC (ARTSAKH) AND THEIR INFLUENCE ON THE COURSE OF STATE BUILDING IN ARTSAKH (1991-1992)

One gets the impression that the general movement in Armenia and Artsakh was led by one center, but analyzing the historical events and the sequence of political events, we are convinced that, paradoxically, the movement in Artsakh and Armenia at that time was led by two extremely opposite political forces. The clashes of these political forces were reflected in Artsakh to a greater extent during the elections of the Supreme Council of the NKR of the first convocation and the formation of state structures.

After winning the elections to the NKR Supreme Council of the first convocation, the ARF decided to transfer a number of important state posts to the opposite political wing in order to maintain internal political stability in the country, as well as to establish stable relations with the RA authorities.

However, in those difficult conditions for the NKR, official Yerevan went to an open political confrontation with Stepanakert, a vivid expression of which was the subsequent attitude of the RA leadership towards the NKR authorities and the steps taken.

Key words: *Nagorno-Karabakh Republic (Artsakh), Republic of Armenia, Supreme Council, State Defense Committee, Self-Defense Forces, State building, State flag of the NKR, Shahumyan region.*

1918-1923 թթ. արցախցիների ինքնորոշման համար պայքարը, տևական ժամանակահատվածում մնալով անթեղված և գորբաչովյան՝ վերակառուցման ու հրապարակայնության՝ ուղղությունին ապավինելով, 1985թ. հետո մտավ նոր փուլ:

Խորհրդային Ադրբեջանի կազմում գտվելով՝ Արցախի բնակչությունը շուրջ 70 տարի անընդմեջ պայքարեց ադրբեջանական իշխանությունների հայավեր քաղաքականության դեմ: Տասնամյակներ շարունակ Խորհրդային

Հայաստանում ու Արցախում դիմումների, խնդրագրերի և ժողովրդական հուզումների տեսք ընդունած այդ համառ պայքարի առանձին դրվագները լռեցվել կամ ճնշվել են խորհրդային ղեկավարության կողմից: Եվ միայն 1985 թվականից հետո ԽՍՀՄ-ում ստեղծված համեմատաբար նպաստավոր քաղաքական պայմանները հնարավորություն ընձեռեցին նորից կյանքի կոչելու մայր հայրենիքին միանալու գաղափարը:

Իսկ ավելի ուշ, աշխարհաքաղաքական նոր իրողությունների պայմաններում, ինչպես նաև նոր մարտահրավերներին դիմակայելու նպատակով՝ Արցախում շարժման ղեկավարությունը ընտրեց միակ ճիշտ՝ փոխզիջումային տարբերակը՝ Շարժման սկեռուն նպատակ՝ *Միացումը*, փոխակերպվեց՝ *Անկախության* գաղափարով:

Թվում է, թե Հայաստանում և Արցախում ընդհանուր շարժումը ղեկավարվում էր մեկ կենտրոնի կողմից, սակայն վերլուծելով պատմանական դեպքերը և քաղաքական իրադարձությունների հաջորդականությունը՝ գալիս ենք այն համոզման, որ այն ժամանակվա Արցախում և Հայաստանում շարժման ղեկավարման հիմքում կանգնած էին իրար երկու ծայրահեղ քաղաքական ուժեր, որոնց բախումները իրենց բացասական ազդեցությունը թողեցին քաղաքական կյանքի, ժողովրդի բարոյահոգեբանական, ինչպես նաև պետական շինարարության գործընթացի վրա:

Այդ քաղաքական ուժերի բախումները Արցախում ավելի արտացոլվեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) առաջին գումարման Գերագույն խորհրդի (ԳԽ) ընտրությունների և պետական ինստիտուտների ձևավորման ընթացքում:

Միաժամանակ նշենք, որ մինչև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության (ԼՂՀ) հռչակումը և (ԳԽ) ընտրությունները Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում (ԼՂԻՄ) պահպանվում ու գործում էին խորհրդային իշխանության բոլոր մակարդակների մարմինները: Սակայն, նրանց գործունեությունը թեև հիմնված էր ԽՍՀՄ օրենքների վրա, այնուամենայնիվ, ամբողջովին ենթարկեցված էր խաղաղ երկխոսության ճանապարհով Ադրբեջանի կազմից դուրս գալու համաժողովրդական շարժման խնդիրներին[1], ինչը հետագայում չարդարացվեց: Մարզում ստեղծված իրադրությամբ և նրա զարգացման ընթացքով թելադրված հիմնախնդիրները լուծելու գործում իշխանական մարմինների կողմից նկատելի երկչոտությունը պահանջում էր նոր կառավարման համակարգի ստեղծում:

---

[1] *Տես՝ **Հակոբյան Տ.**, ԼՂՀ հռչակումը և պետական շինարարության գործընթացը (1991-1994 թթ.), Եր., 2011, էջ 26:*

Զուգահեռ ընթացավ այլ գործընթաց. ծառացած նոր մարտահրավերներին դիմակայելու նպատակով Արցախում սկսեցին քայլեր ձեռնարկվել քաղաքական նոր իշխանական մարմնի ձևավորման ուղղությամբ: Ինքնապաշտպանության գործը կանոնավոր հունի մեջ դնելուն զուգընթաց, 1991 թ. սկզբին ինքնապաշտպանական ուժերի կենտրոնական շտաբին կից ստեղծվեց գաղտնի քաղաքական մի մարմին, որը կոչվեց *Կորդինացիոն խորհուրդ*, որի կազմում ընդգրկվեցին Արցախում գործող քաղաքական ուժերի 7 ներկայացուցիչները[1]: Խորհուրդը հատկապես Շարժման առջև կանգնած քաղաքական ու դիվանագիտական բնույթի հարցերի լուծման գործում ոչ միայն ցուցաբերում էր մեծ ակտիվություն, այլև դարձել էր բոլոր գործողությունների օրինական, իրավական հիմքերի մշակման կենտրոն: Չնայած քաղաքական ուժերի միջև եղած տարաձայնություններին, 'Կորդինացիոն խորհուրդը' միասնաբար կարողանցավ լուծել իր առջև ծառացած խնդիրները:

Արցախում ներքաղաքական անդորրը պահպանվեց մինչև ԼՂՀ առաջին գումարման ԳԽ ընտրությունները: ԼՂՀ-ի հռչակումից հետո սկսվեց նոր իշխանական կառույցների, առաջին հերթին՝ օրենսդիր մարմնի՝ ԳԽ-ի ձևավորման գործընթացը:

Դեկտեմբերի 28-ին կայացան ԼՂՀ ԳԽ ընտրությունները, որոնք անցկացվեցին մեծամասնական ընտրակարգով՝ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա, գաղտնի քվեարկությամբ:

ԼՂՀ ԳԽ ընտրություններից հետո՝ 1992 թ. հունվարի 6-ին, Ստեփանակերտում՝ նախկին մարզխորհրդի նիստերի դահլիճում, «Հայր մեր» տերունական աղոթքով աշխատանքն սկսեց ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը: Նույն օրը ընդունվեց «ԼՂՀ պետական անկախության հռչակագիրը»:

Հանրապետության սահմանները պաշտպանելու և բնակչության անվտանգությունն ապահովելու համար հենց առաջին նիստում որոշվեց ստեղծել հանրապետության իշխանության բարձրագույն մարմիններին ենթակա սեփական ռազմական ուժեր, հասարակական կարգի պահպանության ու պետական անվտանգության մարմիններ և բոլոր ռազմական ուժերը միավորել մեկ հրամանատարության ներքո:

Հունվարի 7-ի նիստում պատգամավորները ձեռնամուխ եղան ԳԽ նախագահի ընտրության հարցի լուծմանը: Առաջադրվեցին 7 թեկնածուներ՝ Լեոնարդ Պետրոսյան, Օլեգ Եսայան, Ռոբերտ Քոչարյան, Արթուր Մկրտչյան, Լևոն Մելիք-Շահնազարյան, Արկադի Մանուչարով և Շահեն

---

[1] *Տես՝ **Հակոբյան Տ.**, ԼՂՀ ձևավորումը որպես մեկնակետ միացյալ Հայաստանի ճանապարհին, «ՎԷմ» համահայկական հանդես, Եր., թիվ 3 (67), 2019, էջ 66:*

Մեղրյան: Թեկնածուներից հինգը ինքնաբացարկ հայտարարեցին, և մնացին Ա. Մկրտչյանն ու Լ. Պետրոսյանը: Մի քանի անգամ քվեարկություն կատարվելուց հետո 42 ձայնով ԼՂՀ ԳԽ առաջին նախագահ ընտրվեց ՀՅԴ անդամ, պատմական գիտությունների թեկնածու, 33-ամյա Ա. Մկրտչյանը:

Արթուր Մկրտչյանի ընտրությունը շատերի համար անսպասելի էր: Ըստ ԼՂՀ առաջին գումարման ԳԽ պատգամավոր, «Արցախի ժողովրդական ճակատ» կազմակերպության ղեկավար Մուրադ Պետրոսյանի. «Ոչ ոք կասկածի տակ չէր դնում, որ նախագահի պաշտոնը պետք է զբաղեցնի Քոչարյանը, որին, ամեն ինչից բացի, աջակցում էր պաշտոնական Երևանը: Բայց Ռոբերտը մինչև նիստն սկսվելը հայտարարում է. «Նախագահի պաշտոնի համար քվեարկվելու է Լեոնարդ Պետրոսյանը»: Ինչքան էլ որ նրան բացատրեցինք, որ «Լեոնարդը չի անցնի», անօգուտ եղավ: Մեր կանխագուշակումը հաստատվեց. Պետրոսյանն ընդամենը 8 ձայն հավաքեց: Քոչարյանն ու շատերը շոկի մեջ էին ոչ միայն Մկրտչյանի սենսացիոն ընտրությունից: Պարզվեց, որ խորհրդարանի պատգամավորների կեսը Դաշնակցության անդամներ են »[1]:

Ստեղծվեց նաև Նախարարների խորհուրդ (ՆԽ), որի նախագահ հաստատվեց Օլեգ Եսայանը, իսկ տեղակալ՝ Բորիս Առուշանյանը: Ընտրված պատգամավորների մեծամասնությունը ՀՅԴ անդամներ էին, և ԳԽ նախագահի ընտրություններում հաղթանակ տանելով՝ ՀՅԴ-ն որոշում ընդունեց երկրում ներքաղաքական կայունությունը պահպանելու, ինչպես նաև ՀՀ իշխանությունների հետ կանոնավոր հարաբերություններ ստեղծելու նպատակով՝ մի շարք կարևոր պաշտոններ, այդ թվում ՆԽ նախագահինը, հանձնել մյուս քաղաքական ուժերին: Նաև ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի առաջարկով՝ ԼՂՀ ԳԽ նախագահի առաջին տեղակալի պաշտոնի համար առաջադրվեց Ռ. Քոչարյանի թեկնածությունը, սակայն փակ գաղտնի քվեարկության ժամանակ թեկնածուն անհրաժեշտ քվեներ չստացավ: Նախագահի առաջին տեղակալի պաշտոնը մնաց թափուր[2]:

Հունվարի 17-ի նիստում ԼՂՀ ԳԽ նախագահի տեղակալ ընտրվեց ՀՅԴ անդամ Գեորգի Պետրոսյանը, քարտուղար՝ պատմական գիտությունների թեկնածու, անկուսակցական Վլադիկ Հակոբյանը[3]:

ԳԽ նստաշրջանն ընդունեց «Արտակարգ դրության մասին» օրենքը: Ապա կազմավորվեցին ԳԽ մշտական հանձնաժողովները, և գերագույն խորհրդում կազմավորվեցին հետևյալ խումբ-խմբակցությունները. ՀՅԴ խմբակցություն,

---

[1] *Հակոբյան Թ., Կանաչ և սև: Արցախյան օրագիր, Եր., 2011, էջ 181-182:*

[2] *Տես՝ **Հակոբյան Տ.**, նշվ. աշխ., էջ 37:*

[3] *Տես՝ **Աբրահամյան Հ.**, Ճակատագրին ընդառաջ, Եր., 2001, էջ 152:*

որը սկզբնական շրջանում ընդգրկում էր 27, 1994թ. դրությամբ՝ 35 անդամ (խոսնակ՝ Լևոն Մելիք-Շահնազարյան), «Արցախի ժողովրդական ճակատ» պատգամավորական խումբ՝ 2 անդամ, «Մարտակերտցիների խումբ»՝ 18 անդամ, ղեկավար՝ Վահան Գաբրիելյան, խոսնակ՝ Ներսես Օհանջանյան, «Միացում» պատգամավորական խումբ՝ 19 անդամ, խոսնակ՝ Ռոբերտ Քոչարյան, չեզոք անդամներ՝ 4 հոգի, զինվորականներ՝ 13 հոգի[1]:

Այսպիսով՝ Արցախյան շարժման նոր փուլը թևակոխեց նոր՝ անկախ հանրապետության գոյության շրջան: Արցախում իշխանության եկան շարժման ընթացքում ազգային նկարագիր ունեցող, կոփված երիտասարդ ուժեր, որոնք քաղաքական ասպարեզ մտան, թվում էր, շատ սրընթաց և անակնկալ կերպով: Այդպես էր թվում այն ժամանակ, այդպես է թվում նաև այժմ, երբ նրանց գործունեության պատմությունը, դեռևս, կարծես պարուրված է խորհրդավորության շղարշով: Այնինչ, նրանց իշխանության գալու երևույթը միանգամայն բացատրելի ու օրինաչափ է այն ժամանակվա՝ Արցախում և Հայաստանում առկա քաղաքական իրողությունների տեսադաշտում:

Ինչպես տեսանք, նորաստեղծ հանրապետության իշխանության ղեկը ստանձնեց ՀՅԴ-ն: Այս քաղաքական կուսակցության հաղթանակը ակնհայտորեն դուր չեկավ պաշտոնական Երևանին, որի գլուխ էր կանգնած ՀՀՇ-ն: Եվ դա քաղաքական ցնցում հանդիսացավ Հայաստանի նոր իշխանության համար, որը տակավին չէր հասցրել հասկանալ, թե ինչ է կատարվում Արցախում: Նույնիսկ ՀՀ ԳԽ-ն չշնորհավորեց ԼՂՀ նորընտիր իշխանություններին[2]: Փաստորեն, պաշտոնական Երևանը ԼՂՀ-ի համար այդ դժվարին պայմաններում բացահայտ քաղաքական առճակատման գնաց Ստեփանակերտի հետ: Դրա արտահայտությունը դարձան ԼՂՀ իշխանությունների նկատմամբ ՀՀ ղեկավարության հետագա վերաբերմունքն ու ձեռնարկած քայլերը:

ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանը հունվարի 26-ից փետրվարի 2-ը կատարեց առաջին պաշտոնական այցը Երևան: Պաշտոնական տեղեկագրերում մանրամասնություններ չեն պահպանվել նաև այդ այցի վերաբերյալ: Սակայն գոյություն ունեն տեսակետներ այն մասին, թե ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը Ա. Մկրտչյանին ընդունել է խիստ սառը և պահանջել հրաժարական տալ[3]:

Արցախի իշխանությունները փորձեցին մեղմացնել լարված հարաբերությունները ՀՀ իշխանությունների հետ և ԼՂՀ ԳԽ

---

[1] *Տես՝ http://www.nankr.am/hy/32*

[2] *Տես՝ **Աբրահամյան Հ.**, նշվ. աշխ, էջ 153-154:*

[3] *Տես՝ **Հակոբյան Տ.**, նշվ. աշխ., էջ 42:*

նախագահությունը 1992թ. մարտի 26-ին որոշում կայացրեց ստեղծել ԼՂԳ ՆԽ-ին առընթեր ԼՂՀ պաշտպանության կոմիտե (ՊԿ)[1]: ՊԿ նախագահ նշանակվեց Սերժ Սարգսյանը, իսկ ինքնապաշտպանության ուժերի (ԻՊՈՒ) հրամանատարի տեղակալ նշանակվեց Սամվել Բաբայանը: Այդ որոշումից հետո ԳԽ նախագահությունը նպատակահարմար գտավ, որ ԼՂՀ ԳԽ նախագահը մի անգամ ևս հանդիպում ունենա ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հետ՝ երկկողմ հարաբերությունների բարելավման նպատակով: Ա. Մկրտչյանը Երևան մեկնեց մարտի 30-ին և հաջորդ օրը հանդիպեց ՀՀ նախագահի հետ:

Զրույցի ընթացքում ՀՀ նախագահը Ա. Մկրտչյանին նորից հասկանալ տվեց, որ նա իր տեղը պետք է զիջի ՀՀՇ-ական որևէ մեկին, հակառակ դեպքում Հայաստանը կարող է դադարեցնել ռազմական օգնության ցուցաբերումը Արցախին[2]: Միաժամանակ պետք է նշել, որ Ա. Մկտրչյանը իր պաշտոնավարման ժամանակաշրջանում այդպես էլ չընդունվեց ՀՀ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի կողմից: Վերջինս համագործակցում էր միայն ՀՀՇ-ի արցախյան թևի ներկայացուցիչներ Ռ.Քոչարյանի, Ս.Սարգսյանի, Օ.Եսայանի հետ: Այսպես, ՀՀ նախագահ Տեր-Պետրոսյանի օգնությամբ Արցախում ձևավորվում էր ստվերային իշխանություն՝ ընդդեմ Մկրտչյանի ու ՀՅԴ-ի[3]:

Գոյություն ունեն կարծիքներ, որ Ա.Մկրտչյանի և Լ.Տեր-Պետրոսյանի միջև հարաբերությունները դեռևս լարված են եղել մինչև Ա.Մկրտչյանի ԼՂՀ ԳԽ նախագահ ընտրվելը: Անցքերին ծանոթ Աշոտ Պետրոսյանն այդ առիթով իր «Արթուր Մկրտչեան» գրքում նշում է. «Լևոն Տեր-Պետրոսյանի և իր շրջապատի վերաբերմունքն ու դիրքորոշումը Արթուր Մկրտչյանի հանդեպ գոյացել է կանխապես, և այն ունի իր նախապատմությունը: Շարժման հենց սկզբից Արթուր Մկրտչյանի և իր համախոհների հայացքները էապես տարբերվում էին ՀՀՇ-ի վերածված «Ղարաբաղ» երկրորդ կոմիտեի ղեկավարության հայացքներից: ՀՀՇ-ն հետագայում մասնատվեց, սակայն դա այլ հարց է: Սկզբնական շրջանում նրանց միջև առճակատում չկար, թեև համագործակցությունն էլ բարդ հեմքի վրա էր, և չկար միաբանություն:

Դեռևս 1988-89 թվականներին գաղափարական ուժգին բախումներ եղան, և Արթուրը վճռականորեն պաշտպանում էր իր տեսակետը: Պետական համալսարանի մեծ սրահի մեծահավաք մտավորականության առջև պարզորոշ սահմանազատվեցին երկու տեսակետներ, երկու հոսանքներ

---

[1] *Տես՝ ԱՀ կառավարության ընթացիկ արխիվ, ՆԽ 1992թ.մարտի 26-ի նիստի արձանագրություն, N 3:*

[2] *Տես՝ **Աբրահամյան Հ.**, նշվ. աշխ, էջ 160:*

[3] *Տես՝ http://www.aniarc.am/2020/05/21/tatul-hakobyan-article-nk-prsidents-civilnet/*

ձևավորվեցին: Մեկը ներկայացնում էին Արթուր Մկրտչյանը, Իգոր Մուրադյանը, ազգային և ազգայնական մտավորականներ ու ժողովրդի գործուն մասը, որոնց ազգային ինքնագիտակցությունը ամուր հիմքերի վրա էր: Մյուսի կարկառուն առաջնորդը Լևոն Տեր-Պետրոսյանն էր՝ իր շրջապատով: Բնական է, որ այդ հոսանքների միջև հարաբերությունները պիտի սրվեին՝ իրավիճակի ծայրահեղացմանը զուգընթաց:

ՀՀՇ-ի համար, ինչպես հաստատեց ապագան, իշխանությունը նպատակ էր և գերխնդիր: Արթուրենց համար իշխանությունը միայն միջոց էր ազգային նպատակների իրագործման ճանապարհին»[1]:

ԼՂՀ ԳԽ նախագահ Ա. Մկրտչյանի ողբերգական մահից հետո ստեղծված ներքաղաքական անկայուն իրադրությունը չսասանեց ԼՂ պետականության հիմքերը, ավելին, ԼՂՀ իշխանությունների վճռականության շնորհիվ ԻՊ ուժերը կարողացան ազատագրել Շուշին և Լաչինը՝ ցամաքային կապ հաստատելով հայկական երկու պետությունների միջև: Դա կարելի է համարել հայոց ազատագրական պայքարում արցախահայության ամենամեծ ռազմական ու քաղաքական նվաճումներից մեկը և կարևոր գրավական՝ ԼՂ-ի պետականության ամրապնդման համար:

Մայիսյան հաղթանակներից հետո հետո թվում էր, թե ԼՂՀ-ում հանդարտվել են ներքաղաքական հակասությունները, սակայն հունիսի 2-6-ը տեղի ունեցած ԼՂՀ ԳԽ առաջին նստաշրջանը ապացուցեց հակառակը: Նստաշրջանում ԼՂՀ ԳԽ նախագահի ընտրությունների ժամանակ իրենց նորից զգացնել տվեցին ներքին հակասությունները:

Նստաշրջանին մասնակցելու համար ԼՂՀ էին ժամանել Մեծ Բրիտանիայի լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոքսը, ՀՀ ԳԽ նախագահ Բաբկեն Արարքցյանը, ՀՀ հատուկ ծրագրերի վարչության պետ Վահան Շիրխանյանը, ՀՀ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը, ՀՀ ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչներ, ՀՀ ԳԽ պատգամավորներ Կիմ Բալայանը*, Դավիթ Վարդանյանը և ուրիշներ: Նշենք մի ուշագրավ հանգամանք. ՀՀ-ից եկած պաշտոնական պատվիրակության՝ ԼՂՀ ԳԽ նախագահ ընտրելու վերաբերյալ պահանջը արդեն հայտնի էր պատգամավորներին: Նստաշրջանը վարում էր ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ.Պետրոսյանը:

---

[1] ***Ա.Պետրոսյան***, *Արթուր Մկրտչեան, Եր., 2004, էջ 207-208:*

* *Նստաշրջանի ժամանակ լուր տարածվեց ՀՀ ԳԽ պատգամավոր Կ.Բալայանի առեւանգման մասին, ինչի հետեւանքով քաղաքական մեծ աղմուկ բարձրացավ, եւ որոշ ժամանակ անց նա ազատ արձակվեց: Պատահարի հանգամանքները պարզելու համար ստեղծվեց պատգամավորական հանձնաժողով՝ հետեւյալ կազմով. Հ. Գրիգորյան, Կ. Բաբուրյան,Վ. Գրիգորյան, Ռ. Աղաջանյան, Հ. Խաչատրյան:*

Մինչեւ ԳԽ նախագահի եւ նրա առաջին տեղակալի ընտրությունների անցկացումը խոսքը տրվեց ՀՀ ներկայացուցիչներին: Այնուհետեւ ԳԽ նստաշրջանը աշխատանքը շարունակեց դռնփակ նիստով, որտեղ ելույթ ունեցան ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարքցյանը և ՀՀ պաշտպանության նախարար Վ. Սարգսյանը: Նրանք ՀՀ ղեկավարության տեսակետները հայտնեցին ԼՂՀ-ին առնչվող քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ հարցերի շուրջ՝ միաժամանակ հաղորդելով ԼՂՀ ԳԽ նախագահի «բարեհաջող» ընտրությունից հետո ՀՀ-ից սպասվող ծրագրված օգնության մասին:

Պատգամավորների քվեարկությամբ ընդունվեց Արցախի պետականության խորհրդանիշներից մեկը՝ ԼՂՀ պետական դրոշը (կարմիր, կապույտ, նարնջագույն, որի աջ փոքրիկ հատվածը եռանկյունի սպիտակ գծով անջատված է դրոշի հիմնական մասից, ինչը խորհրդանշում է թե՛ Արցախի այսօրվա կացությունը, թե՛ նրա ապագան):

Դրոշի հեղինակը սփյուռքահայ նկարիչ Վահե Ֆատտալն էր: Ինչպես ժամանակին ասել է ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը՝ «Դրոշի նախագիծը հավանության է արժանացել ԼՂՀ ԳԽ նախագահ Ա.Մկրտչյանի կողմից»[1]:

Հունիսի 3-ի առավոտյան նիստում խորհրդարանն անցավ օրակարգի չորրորդ հարցին՝ ԼՂՀ ԳԽ նախագահի ընտրություններին: Նախագահի թափուր պաշտոնի համար առաջադրվեցին Ռ. Քոչարյանի և Գ. Պետրոսյանի թեկնածությունները: Պատգամավոր Հրանտ Խաչատրյանն առաջարկեց նախքան թեկնածուների նախընտրական ծրագրերը լսելը ստանալ ՀՀ ԳԽ պատվիրակության հավաստիացումն առ այն, որ ընտրության արդյունքները չեն անդրադառնա ՀՀ-ի և ԼՂՀ-ի փոխհարաբերությունների վրա: Նման հավաստիացումներ ստանալով ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարքցյանից, որը նաև ընդգծեց հարցի երկկողմանիությունը, խորհրդարանը թեկնածուներին հնարավորություն տվեց ներկայացնել իրենց ծրագրերը և պատասխանել հարցերին[2]:

Փակ գաղտնի քվեարկության առաջին փուլում ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանն իր մրցակցից 7 ձայն ավելի (30) ստացավ, սակայն դա բավական չէր ընտրվելու համար, քանի որ պահանջվում էր ստանալ ընտրող պատգամավորների երկու երրորդի (41) աջակցությունը:

Դարձյալ ԳԽ նախագահի թեկնածուներ առաջադրվեցին Գ. Պետրոսյանն ու Ռ. Քոչարյանը, ինչպես նաև Լ. Պետրոսյանն ու Վ. Գալստյանը: Սակայն վերջին երկուսը հանեցին իրենց թեկնածությունները: Քվեարկությունից

---

[1] *«Երկիր», 03.06.1992թ.:*

[2] *«Արցախ», 08.06.1992թ.:*

առաջ պատգամավորներն իրենց կարծիքը հայտնեցին ստեղծված կացության և թեկնածուների մասին: Երկրորդ անգամ ելույթ ունենալով՝ ՀՀ պաշտպանության նախարար Վ.Սարգսյանը նորից պատգամավորների ուշադրությունը հրավիրեց անձամբ իր և ՀՀ իշխանությունների դիրքորոշման վրա: Քվեարկության երկրորդ փուլն ավարտվեց հետևյալ արդյունքներով. Գ. Պետրոսյանի օգտին՝ 26, Ռ. Քոչարյանի օգտին՝ 27 ձայն: Քվեարկությունից անմիջապես հետո կրկին ելույթ ունեցավ ՀՀ ԳԽ նախագահ Բ. Արարքցյանը՝ պաշտպանելով Վ. Սարգսյանի տեսակետը: Ապա հանդես եկան ՀՀ ընդդիմադիր կուսակցությունների ներկայացուցիչները:

Հաջորդ օրը՝ հունիսի 4-ին, պատգամավորները նախ քննարկեցին ԼՂՀ պատվիրակության՝ ԵԱՀԽ-ի նիստին մասնակցելու նպատակով Հռոմ մեկնելու հնարավորություններն ու նպատակահարմարությունը: Ելույթ ունեցող պատգամավորները քննադատության ենթարկեցին ՀՀ իշխանությունների արտաքին քաղաքականությունը՝ նրանց մեղադրելով վերջին ժամանակները մի շարք փաստաթղթեր ստորագրելու համար, որոնցում ԼՂ-ն հանիրավի դիտվում էր Ադրբեջանի կազմում:

Մինչև ԼՂՀ ԳԽ նախագահի թեկնածուների առաջադրմանն անցնելը, խորհրդարանը որոշեց, որ յուրաքանչյուր թեկնածու կարող է քվեարկվել երեքից ոչ ավելի անգամ: Ապա վերստին առաջադրվեցին Ռ. Քոչարյանի ու Գ. Պետրոսյանի թեկնածությունները՝ այս անգամ, սակայն, Շ. Մեղրյանի, Վ. Հակոբյանի և Բ. Առուշանյանի թեկնածությունների «ընկերակցությամբ»: Վերջին երկուսն իսկույն հանեցին իրենց թեկնածությունները, ապա անսպասելիորեն ինքնաբացարկ տվեցին Գ. Պետրոսյանը և Ռ. Քոչարյանը:

Թեկնածու Շ. Մեղրյանը հանդես եկավ նախընտրական ծրագրով, պատասխանեց պատգամավորների հարցերին, և գաղտնի քվեարկության թերթիկ մտցվեց միայն Շ.Մեղրյանի ազգանունը: Նրա օգտին քվեարկեց 33 պատգամավոր: Արդյունքում ԳԽ նախագահի պաշտոնը կրկին մնաց թափուր:

Մտքերի փոխանակությունից եւ դարձյալ համաձայնության չգալուց հետո որոշվեց նիստն անցկացնել դռնփակ: Փակ նիստում պատգամավորները պաշտպանեցին ԼՂՀ ՆԽ նախագահ Օ. Եսայանի առաջարկը՝ ստեղծված իրավիճակից դուրս գալու համար կազմավորել կողմերի ներկայացուցիչներից բաղկացած համաձայնեցնող հանձնաժողով: Բանակցությունների սեղանի շուրջ նստեցին Գ. Պետրոսյանը, Շ. Մեղրյանը, Լ. Մելիք-Շահնազարյանը, Վ. Բալայանը՝ մի կողմից, եւ Ռ. Քոչարյանը, Լ. Պետրոսյանը, Օ. Եսայանը, Ս. Սարգսյանը՝ մյուս կողմից[1]:

---

[1] *Տես՝ **Հակոբյան Տ.**, նշվ. աշխ., էջ 95:*

Հունիսի 5-ի առավոտյան նիստն սկսելիս պատգամավորներն իմացան, որ բանակցություններն անպտուղ են անցել: Ինչպես հայտնի դարձավ, մի կողմը պաշտպանել է Շ.Մեղրյանի թեկնածությունը, իսկ մյուսը կողմը առաջարկել է ԼՂՀ-ում մտցնել նախագահական կառավարում[1]: Այնուհետեւ Շ. Մեղրյանը հանդես եկավ հայտարարությամբ, նշելով, որ ԳԽ նախագահի համար իր թեկնածության առաջադրվելուց հետո նստաշրջանի ընդմիջումների ընթացքում ետնաբեմում հնչել են տարբեր հայտարարություններ. իբր ԻՊՈՒ ստորաբաժանումները խանգարում են նստաշրջանի աշխատանքին, ինչպես նաև խոսակցություններ են եղել Շահումյանի շրջանի պատվիրակության հասցեին, թե ինչու ԼՂՀ ԳԽ նախագահը պիտի ընտրվի Շահումյանի շրջանից: Ի նշան վիրավորվածության՝ Շահումյանի շրջանի պատվիրակությունը հեռանում է դահլիճից[2]: Ստեղծվում է մի իրադրություն, որը կարող էր հանգեցնել ներքին ընդհարումների: Նշենք նաև, որ առաջարկություններ են եղել իշխանությունը տալ բանակին եւ ցրել խորհրդարանը[3]:

Պատգամավոր Վ. Հայրիյանը կարդաց ԼՂՀ ԻՊՈՒ հրամանատարական կազմի դիմումը խորհրդարանին: Որոշվեց ԼՂՀ ԻՊՈՒ հրամանատար Ա. Տեր-Թադեւոսյանին եւ Հայ առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ սրբազան Մարտիրոսյանին հրավիրել նստաշրջան: Ընդմիջումից հետո ելույթ ունեցավ ՀՀ հատուկ ծրագրերի վարչության պետ Վ. Շիրխանյանը: Նա իր ելույթով հասկացրեց, որ առճակատումը ՀՀ իշխանությունների հետ կարող է հանգեցնել բացասական հետեւանքների: Այնուհետեւ ելույթ ունեցավ ԼՂՀ ԳԽ նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը՝ նշելով, որ հանդես է գալիս որպես իր ժողովրդի ճակատագրով մտահոգված արցախցի և անհանգստացած է Վ. Սարգսյանի այն հայտարարությամբ, թե, իբր, Հայաստանը ներքաշվել է պատերազմի մեջ, և այդ ամենը կատարվել է դաշնակցության մեղքով:

Ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին մի շարք պատգամավորներ, այդ թվում՝ ԻՊՈՒ հրամանատար Ա. Տեր-Թադևոսյանը: Նա պատգամավորներին մասնավորապես հաղորդեց ԼՂՀ սահմանում ադրբեջանական ուժերի կուտակման մասին և առաջարկեց վերջ դնել երկպառակությանը[4]:

Ի վերջո, ձայների ճնշող մեծամասնությամբ որոշվեց ԳԽ նախագահի ընտրությունները հետաձգել մինչև հուլիսի վերջը՝ խորհրդարանի

---

[1] Տես՝ ԱՀ պետարխիվ, Ֆոնդ 254, ցանկ 4, պահպանման միավոր 2, կապ 1, թերթ 98:

[2] Տես՝ նույն տեղում, թ. 95:

[3] Տես՝ նույն տեղում, թ. 86:

[4] Տես՝ նույն տեղում, թ. 94:

պատգամավորական թափուր տեղերի համար կրկնական ընտրությունների անցկացումից հետո:

Երեկոյան նիստում պատգամավորներն անցան «ԼՂՀ պետական անկախության հիմունքների մասին» ԼՂՀ սահմանադրական օրենքի քննարկմանը, ապա և ընդունեցին այն: Նիստի վերջում նրանք ձեռնամուխ եղան ԼՂՀ Սահմանադրության մշակման հանձնաժողովի ստեղծմանը:

Հունիսի 6-ին նստաշրջանն առաջին ընթերցմամբ ընդունեց զինապարտության և զինվորական հանցագործության համար քրեական պատասխանատվության մասին ԼՂՀ օրենքները, որոնք միտված էին հանրապետության ռազմաքաղաքական իրավիճակի կայունացմանը: Պատգամավորները չկարողացան որոշումներ կայացնել ևս մի շարք օրախնդիր հարցերի վերաբերյալ: Նստաշրջանն ընդհատվեց անբավարար թվով պատգամավորների ներկայության պատճառով, քանի որ սահմանային շրջաններում վիճակը վատթարացել էր, և մի շարք պատգամավորներ, լինելով ԻՊՈՒ ստորաբաժանումների մարտիկներ և հրամանատարներ, շտապ մեկնեցին ճակատային գիծ: Որոշվեց նստաշրջանի աշխատանքը շարունակել հունիսի 17-ին:

Այսպիսով, ԼՂՀ առաջին գումարման ԳԽ առաջին նստաշրջանը ցույց տվեց, որ, ինչպես արդեն նշել ենք, ԼՂՀ-ում ոչ միայն չէին մարել ներքաղաքական հակասությունները, այլև, կարելի է ասել, դրանք զարգանում էին արդեն կայծակնային արագությամբ:

Դրանում կարևոր դեր են խաղացել արտաքին ուժերը, որոնք ամեն գնով ձգտում էին իշխանափոխություն իրականացնել ԼՂՀ-ում:

Պատմագրության մեջ հանիրավի կերպով չի բարձրաձայնվում այն պատմական ճշմարտության մասին, որ ԼՂՀ ԳԽ ընտրություններում հաղթանակեցին և իշխանության եկան պաշտոնական Երևանի համար կատարելապես անցանկալի ուժեր, ինչը ՀՀ իշխանությունների, հատկապես նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի համար անսպասելի էր: Ամենայն հավանականությամբ, նա գտնում էր, որ Արցախը կարող է որոշակի քաղաքական ինքնուրույնություն ձեռք բերել և մի կողմ կանգնել Հայաստանի ներքին կյանքից, իսկ արտաքին քաղաքական ասպարեզում՝ իր պահանջները թելադրել որպես անկախ երրորդ կողմ: Այսինքն՝ ՀՀ իշխանությունները կորցնում էին անչափ կարևոր խաղաքարտ, որը անհրաժեշտության դեպքում կարող էր ներքին կայունության գրավական լինել: ՀՀ նախագահը նաև երկյուղ ուներ, որ այդ խաղաքարտը կարող է օգտագործել ընդդիմությունը: Բացի այդ, պաշտոնական Երևանը կարող էր զրկվել հայ-ադրբեջանական հակամարտության, ինչպես նաեւ Արցախյան շարժման մեջ առաջատարի դերից:

Պաշտոնական Երևանի և Ստեփանակերտի փոխհարաբերությունները ավելի խորացան, երբ Ադրբեջանի կողմից անսպասելի և շատ կարճ ժամանակամիջոցում բռնազավթվեց Շահումյանի շրջանն ու Մարտակերտի շրջանի մասը:

Մեր կարծիքով՝ Շահումյանի ու Մարտակերտի անկումը պետք է բացատրել փոխկապակցված, թերևս, իրար լրացնող մի շարք քաղաքական գործոններով:

Այստեղ լիովին բնականոն հարց է ծագում. ինչպե՞ս պատահեց, որ վերջին պարտություններից հետո բարոյալքված ադրբեջանական բանակը, որն ի վիճակի չէր լայնածավալ ռազմագործողություն վարել, հանկարծ կարողացավ այդքան մեծ հաջողությունների հասնել շատ կարճ ժամանակահատվածում: Չէ որ Ադրբեջանի ներքաղաքական ճգնաժամը չէր կարող նպաստել ադրբեջանական բանակի մարտական ոգու վերելքին: Ընդհակառակը, այդ ճգնաժամը ավելի էր խարխլում նրա մարտունակությունը:

Պետք նշել նաև, որ նման երևութը կասկածելի է քաղաքական ասպարեզում ու պատմագիտության մեջ. այն մտորումների և ուսումնասիրության տեղիք է տալիս՝ միգուցե աղերսելով հետագայում բացահայտում: Մինչև այսօր փորձեր չեն ձեռնարկվել օբյեկտիվության և առողջ տրամաբանության հիման վրա վերհանել անկման պատճառները: Հաշվի առնելով խնդրի բարդությունն ու խճողվածությունը, ինչպես նաև նրա քաղաքական երկարատև շահարկումները՝ հեղինակները հիմնականում շրջանցել են այն: Սակայն շրջանառության մեջ կան տարբեր տեսակետներ, բայց մի բան ակնհայտ է, որ ԼՂՀ և ՀՀ ուժային համակարգերը տեղյակ էին ադրբեջանական բանակի խոշոր կուտակումների մասին[1]:

Հետագայում կտեսնենք, որ իրադարձությունների զարգացումը և երկրում ստեղծված քաոսային վիճակը անխուսափելի դարձրին մի շարք արմատական փոփոխությունները ԼՂՀ-ի ներքաղաքական կյանքում, որոնք կատարվեցին ՀՀ ղեկավարության պահանջով: Դրանից հետո միայն սկսվեց Արցախյան պատերազմում հայկական կողմի նոր հաջողությունների շրջանը:

Շահումյանի և Մարտակերտի հանձնումը մեծ աղմուկ բարձրացրեց Հայաստանի ներքին կյանքում, լարվեց ներքաղաքական դաշտը: Փոխադարձ մեղադրական կոչեր լսվեցին միմյանց հանդեպ: Շահումյանում տեղակայված Հայաստանի զինված ուժերը մեղադրվեցին դիմադրություն

[1] *Տես՝ նույն տեղում. թ.94:*

ցույց չտալու և խուճապ առաջացնելու մեջ: Իսկ հակառակ թևը մեղադրում էր ԼՂՀ ղեկավարությանը[1]:

Ստեղծված ծանր կացությունից դուրս գալու նպատակով ԼՂՀ ԳԽ նախագահությունը փորձեց համապատասխան ուղիներ որոնել: Դրությունը շտկելու նպատակով ԼՂՀ իշխանությունները փորձեցին իրագործել գործադիր և ռազմական իշխանությունների կենտրոնացումը ՊԽ-ի ձեռքում, ինչը հնարավորություն կտար դուրս գալ ստեղծված ճգնաժամային կացությունից: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտներին:

Դրանից ելնելով՝ դեռևս հուլիսի 18-ին ԼՂՀ ԳԽ նախագահության նիստում քննարկվեց *ՀՀ-ԼՂՀ* փոխհարաբերությունների հարցը: Հաշվի առնելով երկու հայկական հանրապետությունների փոխհարաբերությունների նման վիճակը, ինչպես նաև՝ ելնելով արցախյան հիմնահարցի ըմբռնման գործում պաշտոնական Երևանի դիրքորոշումը պարզելու անհրաժեշտությունից՝ ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշում կայացրեց՝ ՀՀ իշխանությունների հետ բանակցություններ սկսելու նպատակով ՀՀ ուղարկել ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակություն՝ հետևյալ կազմով՝ Գ. Պետրոսյան, Վ. Հակոբյան, Վ. Աղաբալյան, Վ. Ալեքսանյան, Կ. Բաբուրյան, Վ.Ղազարյան, Հ. Խաչատրյան[2]:

Բանակցությունների ընթացքի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ, սակայն, հաշվի առնելով այդ ժամանակաշրջանի որոշ քաղաքական գործիչների վկայությունները[3] և ուսումնասիրելով հուլիսի 27-ի ԼՂՀ ԳԽ նախագահության նիստի սղագրությունը, որտեղ ներկայացված են ՀՀ իշխանությունների հետ բանակցած ԼՂՀ ԳԽ նախագահության պաշտոնական պատվիրակության անդամների կարծիքները, գալիս ենք այն եզրահանգման, որ ՀՀ նախագահը ձգտում էր ձերբազատվել ԼՂՀ ԳԽ նախագահության «անհնազանդ» անդամներից՝ պահանջելով ստեղծել մի ռազմաքաղաքական կամ պետական խորհուրդ և նրան փոխանցել օրենսդիր ու գործադիր մարմինների բոլոր պարտականությունները: Եվ կարելի է կռահել, թե ինչու օգոստոսի 11-ին հանրապետության ՆԽ նախագահ Օ. Եսայանը դիմեց ԳԽ նախագահությանը՝ իր հրաժարականի հարցը քննարկելու խնդրանքով: Նա իր այդ քայլը բացատրում էր իշխանության գոյություն ունեցող կառույցների և ռազմական իրավիճակի պահանջների անհամապատասխանությամբ և առաջարկեց մինչև 1992թ. վերջը

---

[1] *Տես՝ **Ուլուբաբյան Բ.**, Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Եր., 1997, էջ 463:*

[2] *Տես՝ ԱՀ պետարխիվ, Ֆոնդ 254, ց. 1, պ.մ. 4, կ. 1, թ. 22-23:*

[3] *Հեղինակի անձնական արխիվ:*

հանրապետությունում ռազմական դրություն մտցնել, ինչպես նաև ստեղծել ինչ-որ մարմին և ԼՂՀ ԳԽ-ի ու ՆԽ-ի լիազորությունները հանձնել այդ մարմնին: Իսկ հաջորդ օրը՝ օգոստոսի 12-ին նույն, հրաժարականների հարցով երկրորդ անգամ ԼՂՀ ԳԽ նախագահությանը դիմեց նախագահի պաշտոնակատար Գ. Պետրոսյանը և ԼՂՀ ԳԽ քարտուղար Վ. Հակոբյանը, սակայն նախագահությունը դարձյալ որոշեց մերժել վերջիներիս հրաժարականների դիմումը[1]:

Նշված իրադարձության վերաբերյալ կարծիքներ էին տարածվել, թե ԳԽ նախագահի պաշտոնակատարի և քարտուղարի հրաժարականի պատճառը ներքին և արտաքին ճնշումներն են, և այդ քայլը իշխանական համակարգում երկպառակությունը կանխելու նպատակ է հետապնդում:

Այսպիսով՝ հունիսյան ռազմական անհաջողություններից հետո ԼՂՀ-ում ստեղծվեց ծայրաստիճան լարված և անկայուն իրավիճակ՝ սպառնալով երկրի անվտանգությանը: Դրությունը շտկելու նպատակով ԼՂՀ իշխանությունները փորձեցին իրագործել գործադիր և ռազմական իշխանությունների կենտրոնացումը ՊԽ-ի ձեռքում, ինչը հնարավորություն կտար դուրս գալ ստեղծված ճգնաժամային կացությունից: Սակայն այդ փորձերը բախվեցին ՀՀ իշխանությունների կողմից ներքաղաքական նկատառումներով հարուցված անհաղթահարելի խոչընդոտներին: Անհրաժեշտ է նշել նաև, որ այսօր որոշ քաղաքագետներ և պատմաբաններ ԻՊՈՒ-ի անհաջողությունները վերագրում են ԳԽ-ին և ԻՊՈՒ-ի նախկին հրամանատարությանը, որի ռազմաքաղաքական գործունեությունը համարում են կազմակերպչական տեսակետից անարդյունավետ, դրան գումարելով ռուսական օգնությունը Ադրբեջանին, նաև Հայաստանի ոչ ռուսական կողմնորոշումը: Սակայն, պատմական դեպքերը ուսումնասիրելուց և վերլուծելուց հետո կասկածի տակ է առնվում նման տեսակետի տրամաբանական լինելը:

1992թ. օգոստոսի 15-ը դարձավ ԼՂՀ-ի պատմության մեջ մի նոր ուղենիշային տարեթիվ. այդ օրը տեղի ունեցավ ԼՂՀ ԳԽ և ՆԽ համատեղ նիստը, որը պետք է վճռեր ՆԽ նախագահի հրաժարականի հարցը և լուծում տար ՀՀ նախագահի՝ մի նոր մարմնի ստեղծման պահանջի հետ կապված մի շարք խնդիրների: Ընդունվեց ԼՂՀ ՆԽ նախագահ Օ. Եսայանի հրաժարականը: Երկրորդ հարցի վերաբերյալ եղան բազմաթիվ իրարամերժ կարծիքներ, և, ի վերջո, ընդդիմադիր կողմերը եկան փոխհամաձայնության: ԼՂՀ ԳԽ նախագահությունը որոշեց ռազմական դրության ռեժիմն իրականացնելու համար «ԼՂՀ պետական անկախության հիմունքների

[1] *Տես՝ ԱՀ պետարխիվ, Ֆոնդ 254, ց. 1, պ.մ. 4, կ. 1, թ. 31-33:*

մասին» սահմնադրական օրենքի 9-րդ բաժնի 3-րդ հոդվածին համապատասխան՝ ստեղծել Պաշտպանության պետական կոմիտե (ՊՊԿ)[1]:

ՊՊԿ նախագահ նշանակվեց Ռ. Քոչարյանը, ՊՊԿ նախագահի առաջին տեղակալ՝ ԼՂՀ ՆԽ նախագահի առաջին տեղակալ Բ. Առուշանյանը, ՊՊԿ նախագահի տեղակալ՝ ԼՂՀ ԳԽ նախագահության անդամ, պետական շինարարության, իրավական հարցերի և օրինականության ամրապնդման հանձնաժողովի նախագահ Կ. Բաբուրյանը: ՊՊԿ կազմի մեջ ընդգրկվեցին ԼՂՀ ԳԽ նախագահության անդամ, պաշտպանության և անվտանգության հանձնաժողովի նախագահ Վ. Բալայանը, ԼՂՀ ՊԿ նախագահ Ս. Սարգսյանը, ԼՂՀ ՆԳՆ նախարարի պաշտոնակատար Ա. Իսագուլովը, ԻՊՈԻ հրամանատարի առաջին տեղակալ Ս. Բաբայանը:

ՊՊԿ-ին փոխանցվեցին ՆԽ-ի՝ «ԼՂՀ նախարարների խորհրդի մասին» օրենքով նախատեսված բոլոր պարտականությունները, ռազմական դրության ռեժիմի իրականացման այն լիազորությունները, որոնք նախատեսված են «Ռազմական դրության մասին» ԼՂՀ ԳԽ նախագահության 1992 թ. օգոստոսի 13-ի հրամանագրով: ԼՂՀ ԳԽ նախագահության մի շարք լիազորություններ նույնպես փոխանցվեցին ՊՊԿ-ին: ՊՊԿ նախագահին օժտվեց ԼՂՀ ՆԽ նախագահի լիազորություններով: ՊՊԿ նախագահին պարտավորեցվում էր 6 ամիս հետո իր գործունեության հաշվետվությունը ներկայացնել ԳԽ:

ՊՊԿ-ի ստեղծումով սկսվեց արցախյան պետականության գոյապայքարի տարեգրության մի նոր էջ: Անժխտելի է, որ պատերազմական ծանր իրադրությունում կենտրոնացված իշխանական համակարգի, մասնավորապես՝ ռազմաքաղաքական մարմնի նորովի ստեղծումը, ինչպիսին էր ՀՀ իշխանությունների համակրանքը վայելող ՊՊԿ-ն, դարձավ կենսական անհրաժեշտություն և պատմականորեն արդարացվեց: Սակայն, պետաշինարարության հետագա ընթացքի ուսումնասիրությունն ու վերլուծելությունը ակնբախ են դարձնում այդ գործում եղած մի շարք էական թերություններն ու շեղումները, որոնք իրենց բացասական դրոշմն են դրել հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի վրա:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, պ.գ.դ. Վ.Ռ.Բալայանը:

[1] Տես՝ ***Հակոբյան Տ.***, *նշվ. աշխ., էջ 95:*